

2020

**ՀՀ Սյունիքի մարզի Սիսյանի բժշկական կենտրոնի
վերակառուցում**

ՀՀ Սյունիքի մարզ, Սիսյան համայնք, ք. Սիսիան փ. Չարենց թիվ
14

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /լրամշակված/**

**ԿԱՏԱՐՈՂ
Ա/Չ Ա. ԳԱԼՈՅԱՆ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ**

Ա/Չ Ա. Գալոյան
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՀՀ



ՀՀ Սյունիքի մարզի Միսյանի բժշկական կենտրոնի վերակառուցում
ՀՀ Սյունիքի մարզ, Միսյան համայնք, ք. Միսիան փ. Չարենց թիվ 14

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /լրամշակված/

«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ տնօրեն՝

Հ. Լևոնյան

Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	4
1.3	Հապավումներ	4
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր.....</i>	7
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	7
1.5.3	<i>Քանդման աշխատանքներ.....</i>	Error! Bookmark not defined.
1.5.4	<i>Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....</i>	10
1.5.5	<i>Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ.....</i>	13
1.5.6	<i>Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց.....</i>	Error! Bookmark not defined.
1.5.7	<i>Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ.....</i>	16
1.5.8	<i>Նյութերի և բնարեսուրսների օգտագործում.....</i>	16
1.5.9	<i>Արտաքին ցանցեր</i>	Error! Bookmark not defined.
1.5.10	<i>Էլ. մատակարարում.....</i>	Error! Bookmark not defined.
1.5.11	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում.....</i>	Error! Bookmark not defined.
1.5.12	<i>Գազամատակարարում.....</i>	19
1.5.13	<i>Կանաչապատման աշխատանքներ.....</i>	20
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ` ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	28
2.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	Error! Bookmark not defined.
2.2	Կլիման	Error! Bookmark not defined.
2.3	Օդային ավազան.....	Error! Bookmark not defined.
2.4	Ջրային ռեսուրսներ	Error! Bookmark not defined.
2.5	Հողերի նկարագիրը	Error! Bookmark not defined.
2.6	Հողային ռեսուրսներ	Error! Bookmark not defined.
2.7	Բուսական աշխարհ	Error! Bookmark not defined.
2.8	Կենդանական աշխարհ	Error! Bookmark not defined.
2.9	Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը	Error! Bookmark not defined.
2.10	Թափոնների կառավարում	17
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	45
3.1	Ռիսկերի գնահատում	45
3.2	Արտանետումների աղբյուրները	46
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	46
3.3.1	<i>Մթնոլորտային օդ.....</i>	46
3.3.2	<i>Ջրային ռեսուրսներ.....</i>	46
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	47
3.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....</i>	47
3.3.5	<i>Աղմուկ և թրթռում.....</i>	48
3.3.6	<i>Թափոնների կառավարում</i>	49
3.3.7	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում.....</i>	49
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	51
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	52
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	54
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	56

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ57

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ **ՀՀ Քաղաքաշինության կոմիտե**

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ **ք. Երևան Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 3**

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝ **ՀՀ Սյունիքի մարզ, Սիսյան համայնք, ք. Սիսիան փ. Չարենց թիվ 14**

1.6 Հեռախոս՝ **+374 41 802222**

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ **"ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ" ՍՊԸ**

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է վերակառուցել Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքի բժշկական կենտրոնը: Բժշկական կենտրոնի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Սիսիան փ. Չարենց թիվ 14 հասցեում:

Բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),

- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ- 121), պահպանության և օգտագործման մասին (1998),
- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
- «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ., ՀՀ կառավարության 29.01.2010թ.
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության <<ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության <<ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
- «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.02.2006թ. N160 – Ն որոշումը
- ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N8 արձանագրություն
- <<ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին>> ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- Հաշվի են առնվել նաև`
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և

օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում

- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Բժշկական կենտրոնի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Մխիթան փ. Չարենց թիվ 14 հասցեում:

Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Տեղանքը հարթ է, կառուցապատված: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Հողատարածքի ընդհանուր կազմում է 2.38 հա:

Հողամասի բնութագրերը համաձայն 1843739 սեփականության վկայականի՝

- Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- Օգտագործման նպատակը՝ հիվանդանոցի շենք
- Սեփականություն

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Ներկայացված նախագիծը կատարված է համաձայն 24.11.2019թ. ՀՀ Սյունիքի մարզ Մխիթան համայնքի կողմից հաստատված N57 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող ՀՀ քաղաքաշինական նորմերի և կանոնների:

Նախագծի նպատակն է Մխիթանում առկա բժշկական կենտրոնը վերակառուցով՝ վարչական մասնաշենքը (762,4մ²), հիվանդանոցի տարածքում գտնվող կիսակառույց շինությունը(269,4 մ²)վ, արհեստանոցը (186,3մ²), անատոմիկը (86,2մ²) և ավտոտնակը (192,1մ²) ապամոնտաժել:

Հիվանդանոցային մասնաշենքը ուժեղացնել, կառուցել վարչական մասնաշենք՝ տաք անցումով, կառուցել նոր անատոմիկ (186,9մ²), կաթսայատուն (43,5մ²), շվաքարան (63,0մ²) ավտոտնակ (34,2մ²): Շենքի դիմային հատվածում ավտոպարկինգի իրականացում (1025,0մ²): Նախատեսել արտաքին բարեկարգում:

Նախատեսվել է նորմատիվ և կանոնակարգային փաստաթղթերով պահանջվող բոլոր սենյակները և սենքերը:

Վարչական մասնաշենքը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև 30000*22000 չափսերով 2 հարկանի շինություն:

Հիվանդանոցային շենքի և տաք անցումի կոնստրուկցիաները իրականացվել են միաձույլ երկաթբետոնով, հարկի բարձրությունը 3,3մ: Տանիքը նախատեսվել է փայտածալեղնային, կազմակերպված ջրահեռացմամբ: Վարչական մասնաշենքի համար նախատեսվել է ջերմամեկուսացում և երեսապատում՝ տրավերտինե և բազալտե սալիկներով, իսկ տանիքիարտաքին ջրահեռացումը կազմակերպվել է կազմակերպված, ալիկաբոնդով երեսապատված տուփերի միջով: Վերակառուցվող մասնաշենքի արտաքին պատերը նախատեսվել է մաքրել քիմիական լուծույթով:

Հատակները իրականացվել են վինիլով 4 մմ հաստությամբ, սանհանգույցներում՝ խեցեսալով, ծնարաններում և վիրահատարաններում հակաստատիկ վինիլով: Պատերի հարդարումը նախատեսված է լավորակ գաջե սվաղով և լատեքսային ներկով: Սանհանգույցներում պատերը երեսապատել հախճասալերով h=2.8 մ, ծնարաններում և վիրահատարաններում խոշոր չափսի կերամիկական սալերով, ռենտգեն սենյակներում բարետային սվաղ ապակեմանրաթելային ցանցով: Առաստաղները Արմսթրոնգ տեսակի, սանհանգույցներում ՊՎՔ տեսակի պլաստմասե, իսկ ռենտգեն սենյակում բարետային սվաղ ապակեմանրաթելային ցանցով: Թաց կետերում իրականացված է հատակների ջրամեկուսացում:

Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե մոխրագույն, չորս խցիկանի պրոֆիլներով: Դռները միջանցքներում այլումինե սպիտակ գույնի պրոֆիլներով ճոճվող դռներ, սենյակներինը՝ ջրակայուն փայտից, Պվք դռներ, իսկ ռենտգեն սենյակի համար նախատեսվել է՝ մետաղական արձիճապատ դռներ: Արտաքին դռները այլումինե մոխրագույն:

Բոլոր աստիճանների համար նախատեսվել են բազալտե երեսապատում և մետաղական բազրիքներ: Թեքահարթակների համար այլումինե դեկորատիվ բռնածող:

Նախատեսվել է արտաքին բարեկարգում, ճանապարհների ասֆալտապատմամբ, բազալտե եզրաքարերի տեղադրումով և կանաչապատումով:

Նախագիծը իրականացվել է ՀՀ-ում գործող նորմերի և կանոնների՝

ՀՀՇՆ IV13. 01-96 ՀՀՇՆ II-8. 04.01-97

ՇՈՒՍ 2. 08. 01-89 ՇՈՒՍ 2. 02. 01-83*

ՀՀՇՆ I-4. 02-99 ՇՈՒՍ 2. 08. 01-89

ՀՀՇՆ II-6. 02-2006 ՇՈՒՍ 2. 08. 02-89

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ

- Հողատարածքի մակերես՝ 2.38հա
- Կառուցապատման մակերեսը՝ 3324մ²

- Բարեկարգման և կանաչապատման մակերեսը՝ 15749մ²

1.6 Դիտարկմանի բնութագիր

Տվյալ աշխատանքային նախագիծը մշակված է համաձայն

- ճարտարապետահատակագծային առաջադրանքի
- ընկերության հարակից բաժինների առաջադրանքների

2. Շինության հրակայունության աստիճանը II

3. Որպես 0.000 պայմանական նիշ ընդունված է շինության հատակի նիշը, որը համապատասխանում է 1569.75 բացարձակ նիշին

4. Հիմքերը - ժապավենաձեղ, միաձույլ երկաթբետոնից

5. Շենքի կոնստրուկտիվ համակարգը հիմնակմախքային, լուծված երկայնական և լայնական շրջանակներով

6. Որմնախարիսխը - բետոնից, արտաքին կողմից երեսապատված բազալտե սալերով

7. Արտաքին պատերը - երկու տակ տուֆե բլոկներից, արտաքին կողմից՝ երեսապատված տուֆե և տրավերտինե 30 մմ սալիկներով

8. Միջնորմները - շլակաբետոնե սալերից

9. Հորիզոնական ջրամեկուսացումը իրականացնել ցեմենտավազե շաղախով 30մմ հաստությամբ 1 : 2 հարաբերությամբ

10. Տանիքը - երկլանջ, ջրահեռացումը - կազմակերպված, արտաքին հատակները իրականացնել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո

12. Ձմռան ժամանակ շինարարական աշխատանքներ կատարելիս առաջնորդվել

СНИП 3.03.01-87 – ով:

ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հ/Հ	ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	ՄԱԿԵՐԵՍԸ U ²
1	ՍՊԱՄԱՍՐԱՀ	9,6
2	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՄԱՏԵՆԱՎՈՐՄԱՆ, ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՏՐՄԱՆ ՄԱՍ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՐԽԻՎ	8,35
3	ՄԱՆՀԱՆԳՈՒՅՑ	2,1
4	ՄԻՋԱՆՅՔ	16,0
5	ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՍԵՆՅԱԿ	10,8
6	ԲԺՇԿԻ ԵՎ ԳԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՄԵՆՅԱԿ	8,6
7	ԻՆՎԵՆՏԱՐԻ, ՄԱՔՈՒՐ ՍՊԻՏԱԿԵՂԵՆԻ ՊԱՀՄԱՆ ՍԵՆՔ	5,45
8	ՈՒՆԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՆԱՎՈՐ ԵՎ ՑՆԳՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ	2,46
9	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՆՀԱՆԳՈՒՅՑ	2,1
10	ՄՈՐՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԲՈՐԱՏՈՐԻԱ	11,4
11	ՀԻՍՏՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԲՈՐԱՏՈՐԻԱ	12,0
12	ԲԻՕՊՄԻՈՆ ԵՎ ԱՌԻՏՈՊՄԻՈՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՅՄԱՆ ՍԵՆՔ	3,4
13	ՀԱՆԳԵՐՁԱՐԱՆ, ՑՆՑՈՒՎԱՐԱՆ	6,4
14	ՆԱԽԱԳԻԱՀԵՐՁԱՐԱՆ	6,3
15	ԳԻԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԵՆՔ	17,4
16	ԳԻԱՀԵՐՁԱՐԱՆ	18,0
17	ԳԻԱԿՆԵՐԻ ՀԱՆԳԵՐՁԱՎՈՐՄԱՆ ՍԵՆՔ	8,5
18	ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՂՏՈՏ ՍՊԻՏԱԿԵՂԵՆԻ ՍԵՆՔ	4,8

Բժշկական կենտրոնում և դիախերձարանում առաջացող կլինիկական թափոնները, տարեկան մոտ 350կգ, կպահեստվորվեն համապատասխան բժշկական թափոնների համար նախատեսված սենյակում և կհանձնվեն համապատասխան լիցենզավորված ընկերության:

1.7 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարձքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանել համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն :

1.8 Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ




ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:750
ГЕН ПЛАН М 1:750

ՄԱՍՆԱՇՇԵՆՔԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
НАЗВАНИЕ ЗДАНИЙ

- 1 Հիվանդանոցային ՄԱՍՆԱՇՇԵՆՔ-2034.7մ²
 - 2 БОЛЬНИЧНАЯ ЧАСТЬ-2034.7м²
 - 3 ԳԻԱՀԵՐՉԱՐԱՆ-186.9մ²
 - 4 МОРГ-186.9м²
 - 5 ԷԼ. ԵՆԹԱԿԱՅԱՆ-53.6մ²
 - 6 ЭЛ. ПОДСТАНЦИЯ-53.6 м²
 - 7 ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆ-43.5մ²
 - 8 КАТЕЛЬНОЯ-43.5м²
 - 9 ՇՎԱՔԱՐԱՆ-63.0մ²
 - 10 ШОП-63.0м²
 - 11 ԱՎՏՈՏՆԱԿ-34.3մ²
 - 12 ГАРАЖ-34.3м²
 - 13 ԱՎՏՈՊԱՐԿԻՆԳ-1025.0մ²
 - 14 ПАРКИНГ-1025.0м²
 - 15 ՊԱՀԱԿԱԿԵՏ-24.0մ²
 - 16 КОНТРОЛЬНО-ПРОПУСКНОЙ ПУНКТ-24.0м²
- ԸՆԴՀԱՄԵՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ- 3324.4մ²
ВСЕГО СТРОИТЕЛЬСТВЕННАЯ ПЛОЩАДЬ- 3324.4մ²
ԸՆԴՀԱՄԵՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ-15749.0մ²
ВСЕГО БЛАГОУСТРОЙСТВЕННАЯ ПЛОЩАДЬ-15749.0մ²

ՏԵՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

N	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԶՎՓՍԱՆ ՄԻԿՐՈՆԵ	ԾԱՎԱԼԸ
1	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	մ ²	3324.4
2	ԱՌԿԱ ԸՆԹԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՄՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	մ ²	5604.4
3	ԸՆԴՈՒՅՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՎԱԼԸ	մ ³	21051.14
4	ՋԵՌՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԸ	Կվտ (կվտ/ժամ)	291 (249956)
5	ՕԳԱՓՈՆՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԸ	Կվտ (կվտ/ժամ)	131 (112660)
6	ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱԽՍԸ	Կվտ (կվտ/ժամ)	232.5 (200000)
7	ԿԱԹՍԱՅԱՏՄԱՆ ԾԱԽՍԸ	Կվտ (կվտ/ժամ)	785 (675139)
8	ԸՆԴՈՒՅՈՒՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄՈՒՐ ԱՐԺԵՔԸ	հազ.դրամ	1468807.35
9	ԸՆԴՈՒՅՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ	հազ.դրամ	1129000.00
10	ԸՆԴՈՒՅՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	օր	870



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
УСЛОВНЫЕ ЗНАКИ

- ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ ՕԶԵԼԵՆԵՆԻԵ
- ԱՄՖԱՆԱՍԱՊԱՏՈՒՄ ԱՏՓԱԼՏԻՐՈՎԱՆԻՍ
- ՄԱՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ
- ԲԱՉԱԼՏԵ ԵԶՐԱՔԱՐ
- ԲՈՐԺՈՐ ԲԱԶԱԼՏՎՅԱԿ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՇՏՆ ԴՈՒՅՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՐԱՐՈՒՄ	ԱՌՈՒ ԿՐԿԱՆՈՒՄ	ՍՏՈՐԱԳՐ. ՍԿՐԻՊ	ԱՄԻՍ ԿԱՆԱԿ	ՀՀ ՍՅՈՒՆԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄՈՒ ՓՐՈԵԿՏ ՐԵԿՈՆՏՐԱԿՏԻՍՏՐԱԿՏՈՒՄ Գ. ՍԻՏԻԱՆ, ՄԱՐՅ ՏՅՈՒՆԻԿՐԱ	ՓՈՒԼ ՏԱԴԻԱ	ԹԵՌԹ ԼԻՏ	ԹԵՌԹԵՐ ԼԻՏՈՎ
ՆԳՏ	Ն. ՍԱՐԳՍՅԱՆ	ՍԿՐԻՊ	ԱՄԻՍ		ՄՆ ՐՓ	ՃՇ-20	ԱՇ-20
ՄԱՍՆԱՇՇԵՆՔԻ ՓՐՈԵԿՏՐ.	Հ. ՄԵՍՐՈՒՅԱՆ	ՍԿՐԻՊ	ԱՄԻՍ	ԱՐԽԻԿԵՏՈՒՐՆԱ-ՍՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍ	«ՀԱՄԱՇԽՆԱԽԱԳԻՈ» ՍՊԸ		
				ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՈՒՄ Մ 1:750 ГЕН ПЛАН М 1:750	ՕՕՈ «ԱՄԱՏԻՆ ՆԱԽԱԳԻՈ»		

1.9 Ժամանակացույց

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
КАЛЕНДАРЬНЫЙ ГРАФИК

N	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ИМЯ РАБОТЫ	ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ(КАЛЕНДАРЬНЫЙ ГРАФИК)																												
		30	60	90	120	150	180	210	240	270	300	330	360	390	420	450	480	510	540	570	600	630	660	690	720	750	780	810	840	870
1	ՔԱՆԴԱՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ДЕМОНТИРУЕМЫЕ РАБОТЫ																													
2	ՏԱՆԻՔԱԾԱԾԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ СТРОЙКА КРЫШИ																													
3	ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ СТРОЙКА ОСНОВЫ																													
4	Ե/ՔԵՏՈՆԵ ՄԻԱԶՈՒՅԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ЖЕЛЕЗАБЕТОННЫЕ КОНСТРУКЦИИ																													
5	ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ УСИЛЕНИЕ ЗДАНИЯ																													
6	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԳԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ РАБОТЫ ВНУТРЕННЕЙ ОТДЕЛКИ																													
7	ՋԵՐՄԱՍԵՎՈՒՄԱՑՈՒՄ УТЕПЛЕНИЕ																													
8	ԻՆՅԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ ИНЖЕНЕРНЫЕ СЕТИ																													
9	ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԳԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ОТДЕЛКА НАРУЖНЫХ СТЕН																													
10	ԱՍՏԻՃԱՆՆԵՐ , ՔԱԶՐԻՔՆԵՐ ЛЕСТНИЦЫ , ПЕРИЛЛЫ																													
11	ԲԱՐԵՎԱՐԳԱՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ УЛУДШЕНИЯ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ																													
12	ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ НАРУЖНОЕ ОСВЕЩЕНИЕ																													
13	ՀՐԳԵՀԱՅԻՆ ԱԶԳԱՐԱՐՈՒՄ ПОЖАРНАЯ СИГНАЛИЗАЦИЯ																													
14	ԹՈՒՅԼ ՀՈՍԱՆՔԻ ՄԱՍ «ԱՆՋՆԱԿԱԶՄԻ ԿԱՆՉԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» СЛАБОТОЧНАЯ ЧАСТЬ «СИСТЕМЫ ВЫЗОВА ПЕРСОНАЛА»																													
15	ՏԵՍԱԾԵՑԻԿՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱԶԱՅՆԱԳՐՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ КАМЕРА И СИСТЕМА ВИДЕОЗАПИСИ																													
16	ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ОБОРУДОВАНИЕ СВЯЗИ																													
17	ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ОБОРУДОВАНИЕ МЕДИЦИНСКОГО ГАЗА																													
18	ՖՈՏՈՎՈԼՏՈՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ ФОТОВОЛЬТОВАЯ ЭЛЕКТРОТЕХНИЧЕСКАЯ ЧАСТЬ																													
19	ԳԱԶԱՍՏԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ОБЕСПЕЧЕНИЕ ГАЗОМ																													
20	ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ДРУГИЕ РАБОТЫ																													

1.10 Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ

Բժշկական կենտրոնի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Սիսիան փ. Չարենց թիվ 14 հասցեում:

Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2.38 հա:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 70 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ – 4 մարդ
- Բանվորներ - 56 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ -10 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

Բետոնախառնիչ 12 մ³՝ 3 հատ

Բետոնախառնիչ 5 մ³՝ 1 հատ

Ավտոկրունկ ZOOMLION 25 մ 30տ՝ 2 հատ

Ավտոկրունկ ZOOMLION 50 մ 50տ՝ 1 հատ

Ավտոգրեյդեր՝ 1 հատ

Ավտոգլղոն 7,5 տ՝ 2 հատ

Ավտոգլղոն 12 տ՝ 1 հատ

Ավտոինքնաթափ 10խմ՝ 10 հատ

Ավտոինքնաթափ 20խմ՝ 5 հատ

Էկսկավատոր 1խմ կովչ՝ 3 հատ

Էկսկավատոր 0,6 խմ կովչ՝ 3հատ

մանր տեխնիկա /bobcat/՝ 5 հատ

Բեռնափոխադրիչ մեքենա կողավոր 20 տ՝ 5 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Հողային աշխատանքներ՝

Տարածքի համահարթեցում՝ 6823քմ

Հետլիցք՝ 975մ³

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Գյումրիի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:

1.11 Նյութերի և բնարեսուրսների օգտագործում

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող շինանյութը կպահետսավորվի շինհրապարակում, հատուկ նախատեսված վայրում, ծածկի տակ :

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է ՇԵ-69Ե ավտոբեռոնախառնիչով՝ վերամբարձի, ավտոբեռոնապոմպի կամ ստացիոնար

բետոնապոմպի միջոցով: Բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{բ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 70 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 870օր

$$W_{\text{բ.տ.}} = (4 \times 0.016 + 70 \times 0.025) \times 780 = 1578.18 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.814 \text{մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

$$U_1 = 500 \times 0.0015 \times 450 = 337.5 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1915.68 մ³/շին. ժամ:

Ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն տեխնիկական պայմանի: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն :

1.12 Թափոնների կառավարում

Միսիան քաղաքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 1200-1300 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 4760տ շինարարական աղբը: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական

ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բժշկական կենտրոնի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Բժշկական կենտրոնի գործունեության ընթացքում առաջացող թափոններն են՝

- Բանեցված սնդիկային ջերմաչափեր և խոտան, 50կգ, ծածկագիր՝ 35330300 13 01 1, կազմ՝ Սնդիկ՝ 23-25%, ապակի՝ 60-65 %, ալյումին՝ 11-15%,
- Բժշկական ասեղներ՝ փչացած կամ օգտագործված, 50կգ, ծածկագիր՝ 97010700 01 05 4, կազմ՝ պողպատ՝ 82-85%, պոլիմերային միացություն՝ 15-18%_
- Բժշկական թափոններ, որոնք գոյանում են առողջապահական ծառայությունների արդյունքում (ախտորոշում, կանխարգելում, բուժում, ծննդաբերություն), 100 կգ, ծածկագիր՝ 97010600 01 054, կազմ՝ Բամբակ, բինտ՝ 40%, ձեռնոցներ՝ 5-10%, թուղթ՝ 30%, միանվագ օգտագործման գործիքներ՝ 5-10%, պլաստմասե սրվակներ՝ 5-10%
- Գործածված միանվագ ներարկիչներ, 50կգ, ծածկագիր՝ 97010800 13 05 3, կազմ՝ պողպատ՝ 10-15%, պոլիմերային միացություն՝ 85-90%
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), 85խմ, ծածկագիր՝ 91200400 01 004 , կազմ՝ Ապակի՝ 10-15%, մետաղ՝ 10-15%, փայտ՝ 5-10%, թուղթ՝ 25-30%, սննդի մնացորդ՝ 20-15%, պոլիմեր՝ 15-30%
- Փողրակներ, սուր առարկաներ (նշտար, հերձադանակ), 100կգ, ծածկագիր՝ 97010500 01 99 4, կազմ՝ պողպատ՝ 100 %,
- Մարմնի և ներքին օրգանների մասեր, 150կգ, ծածկագիր՝ 97010300 01 05 4, կազմ՝ վիրահատության կամ ծննդաբերության ժամանակ հեռացված հյուսվածքներ, օրգաններ՝ 75-80 %, _ կենսաբանական հեղուկներ արյուն, ավիշ 20-25%

Թափոնների ոչինչացումն իրականացվում է այրման միջոցով՝ համապատասխան լիցենզիա ունեցող ձեռնարկության կողմից:

Վերակառուցված բժշկական կենտրոնի շահագործման ընթացքում նոր թափոնատեսակների ի հայտ գալու դեպքում, ընկերությունը օրենքով սահմանված կարգով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն կներկայացնի նոր թափոնի անձնագրեր:

1.13 Արտաքին ջրամատակարարման և կենցաղային կոյուղու ցանցերի

Բակային ջրամատակարարման և կենցաղային կոյուղու ցանցերի նախագիծը մշակված է ըստ պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի և «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների (կցված հավելվածների բաժնում):

Ջրամատակարարման ցանց

Համաձայն տրված առաջադրանքի և տեխնիկական պայմանի նախատեսված է իրականացնել ջրամիացում ք. Միսիան Չարենցի փողոցով անցնող մ110մմ ջրմուղի ցանցից մ90մմ խողովակով: Միացման կետում դիտահորում նախատեսել սողնակ մ80մմ կցաշուրթով: Ջրագիծը նախատեսված է երկու հատակագծով առաջինը՝ միացման կետից մինչև հիվանդանոցի պահակային կետ: Մինչ պահակային կետը փ90 ցանցի վրա նախատեսված է փ125 հակահրդեհային հիդրանտի համար փ1500 դիտահոր, բացի այդ

նախատեսված է ջրաչաձական հանգույց փ80 ջրաչափ ֆիլտր եվ սողնակով փ1500 դիտահորում: Միացումները դիտահորներում կատարվում է կցաշուրթերով: Երկրորդը պահակային կետից մինչեվ հիվանդանոցի բաժանարար հանգույցներ:

Բաժանարար հանգույցից ջուրը տրվում է կաթսայատուն, հիմնական մաստանշենք և դիարան, որոնց համար նախատեսված է համապատասխան ցանցեր իրենց տրամագծերով եվ սպասարկող սողնակներով: Սպասարկման հորը նախատեսված է 2.5x2.5x1.70 (h): Ցանցերի համար նախատեսված են պոլիէթիլենե խողովակներ մ90-20մ:

Անջատումները և միացումները գործող ցանցերի հետ իրականացնել տեղում ելնելով փաստացի իրավիճակից: Թաղման միջին խորությունը հողի նիշից ընդունել 1.50մ ավազի նախապատրաստական շերտով:

Կենցաղային կոյուղու ցանց

Համաձայն տրված առաջադրանքի եվ տեխնիկական պայմանի նախատեսված է համալիրի կոյուղագիծը միացնել տարածքում նոր նախատեսվող կեղտաջրերի հավաքման հորին (տես առանձին գծագիր) մ200մ խողովակով: ցանցերի համար նախատեսված են պոլիէթիլենե ծալքավոր խողովակներ մ200մ:

Անջատումները և միացումները գործող ցանցերի հետ իրականացնել տեղում ելնելով փաստացի իրավիճակից: Թաղման միջին խորությունը հողի նիշից ընդունել 2.80մ ավազի նախապատրաստական շերտով:

Ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր ստուգումներ կատարելու և հետագա շահագործողու համար:

Նախագծային աշխատանքները կատարված են ՀՀ-ում գործող նորմերի եվ կանոնների համաձայն:

1.13.1 Գազամատակարարում

Գազամատակարարման նախագիծը կատարված է համաձայն շինարարական նորմերի և կանոնների ՀՀՇՆ - IV -12.03.01- 04 և տրված գազի տեխնիկական պայմանների հիման վրա (կցված հավելվածների բաժնում):

Գազամատակարարումը նախատեսված է իրականացնել միջին ճնշման գազատարից: Գազի ճնշման կարգավորիչը և հաշվիչը նախատեսված է բժշկական կենտրոնի սահմանի մոտ, պահարանի մեջ:

1.13.2 Կաթսայատուն

Միսյանի հիվանդանոցի կաթսայատան աշխատանքային նախագիծը մշակված է նախագծային առաջադրանքի հիման վրա, համաձայն (СНиП II-35-76):

Կաթսայատունը կառուցվում է հիվանդանոցի տարածքում նախագծով նախատեսված տեղում:

Ընտրված է 2 հատ կաթսաներ յուրաքանչյուրը Q_{զ.}=361200կկալ/ժ ջերմարտադրողությամբ:

Ընտրված կաթսաները արտասահմանյան արտադրության են յուրաքանչյուրը^a
N=420կվտ ջերմային հզորությամբ:

Ջերմատարը ջուր է T1- T2=800 -600C:

Որպես հիմնական վառելիք ընդունված է բնական գազ:

1.13.3 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, կանաչապատման տարածքի մակերեսը կազմում է 9751քմ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի միանալով մոտակայքով անցնող ոռոգման ջրագծին:

Կանաչապատման աշխատանքները իրականացվելու են առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով

1.13.3.1 *Կանաչ տարածքի ոռոգում*

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 9751 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 2

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 9751) \times 2 \times 175 = \underline{20477.1} \text{ մ}^3/\text{տարի}$$

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Արտանետումների առաջացումը կապված է շինարարական աշխատանքների իրականացման փուլում շինարարական նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու և բեռնատարների ու սարքավորման աշխատանքի արդյունքում այրվող վառելիքի վնասակար նյութերի արտանետումներն առաջանում են շինարարական աշխատանքների

ընթացքում, ինչպես նաև ճանապարհի շինարարական աշխատանքների արդյունում առաջացող բիտումի գոլորշիներ: Եռակցման աշխատանքները բերում են եռակցման անբոգոլի և մանգանի մոնօքսիդի արտանետումներին:

Ելակետային տվյալներ

Գյումրի շրջանցկի և Մ1 Գյումրի-Բավրա ճանապարհային հատվածի վերականգման և բարելավման ծրագրի շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել առավելագույնը 30 ամսվա ընթացքում:

Ճանապարհի կառուցման և բարելավման աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ`

Լիցք - 975 մ3

Հանույթ - 6823 մ3

Ընդամենը` 7798 մ3

Եռակցման աշխատանքներ` 5 տ/շինժամանակահատված

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը`

Բետոնախառնիչ 12 մ3` 3 հատ

Բետոնախառնիչ 5 մ3` 1 հատ

Ավտոկրունկ ZOOMLION 25 մ 30տ` 2 հատ

Ավտոկրունկ ZOOMLION 50 մ 50տ` 1 հատ

Ավտոգրեյդեր` 1 հատ

Ավտոգլղոն 7,5 տ` 2 հատ

Ավտոգլղոն 12 տ` 1 հատ

Ավտոինքնաթափ 10խմ` 10 հատ

Ավտոինքնաթափ 20խմ` 5 հատ

Էկսկավատոր 1խմ կովշ` 3 հատ

Էկսկավատոր 0,6 խմ կովշ` 3հատ

մանր տեխնիկա /bobcat/` 5 հատ

Բեռնափոխադրիչ մեքենա կողավոր 20 տ` 5 հատ

Շինարարական աշխատանքների իրականացման փուլի ընդհանուր տևողությունը կկազմի առավելագույնը 870 օր: Յուրաքանչյուր մաս ունի իր տևողությունը, համաձայն որի հաշվարկվել է առանձին աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Մթնոլորտային արտանետումներ

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը

Հաշվարկները կատարված են գործող մեթոդակարգի համաձայն :

$Q = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times 106 \times B \times P6) / 3600$ տ/ժամ, որտեղ (1)

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0.05

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անբոգոլում, 0.02 P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.2

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.6

G վերամշակվող գրունտի քանակը, 7798մ³ : Հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի ժամանակացույցի կազմում է 5 ամիս,

5 ամիս x 26 օր/ամիս x 8 ժամ/օր = 1040 ժամ/շին

G - 7798 մ³ : 1040 ժամ = 7.5 մ³ /ժամ կամ հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ 7.5 մ³ /ժամ x 2.7 տ/մ³ = 20.25 տ/ժամ

Q = (0.05 x 0.02 x 1.0 x 0.2 x 0.5 x 20.25 x 10⁶ x 0.6 x 1.0)/3600 = 0.33 գ/վրկ

0.33 գ/վրկ x 1040 ժամ x 3600վրկ/ժամ : 1000000 = 1.26 տ/շին. ժամանակահատված

բ) Փոշու արտանետումների հաշվարկը շինարարական տեխնիկայի աշխատանքի դեպքում Շինարարական տեխնիկայի աշխատանքների ընթացքում իրականացվում է տեղանքի հարթեցում, հանվող հողային զանգվածի և առաջացած թափոնների թափոնների տեղափոխում ավտոինքնաթափ մեքենաներով: Հաշվի են առնվում շինարարական հարթակում անընդհատ աշխատող տեխնիկայից առաջացած արտանետումները:

Տրանսպորտի շարժման ժամանակ մթնոլորտ է արտանետվում փոշի: Տրանսպորտի շարժը տեղի է ունենում ամբողջ շինարարության ընթացքում՝ 24 ամիս կամ 6000 ժամ:

Մթնոլորտ արտանետվող փոշու քանակը որոշվում է նշված մեթոդակարգի համաձայն /3/:

Q_{տր.} = (C1 x C2 x C3 x N x L x q1 x C6 x C7)/3600 + C4 x C5 x C6 x q2 x F0 x n

բանաձևով, որտեղ՝

C1 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռնանակությունը, C1 = 1.0

C2- գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը, C2 = 1.0

C3 - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը, C3 = 0.1

N – ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում, N = 6

L – մի վազքի միջին երկարությունն է, կմ L = 0.05 կմ

C4 - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմայի վրա նյութի մակերևույթի պրոֆիլը, C4 – ը տատանվում է 1.3 – 1.6-ի սահմաններում C4 = 1.3

F0 –պլատֆորմայի միջին մակերեսն է , F0 = 12

C5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը, C5 = 1.0

C6 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը C6 = 0.2

C7- գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը, ընդունում ենք՝ C7 = 0.01

q1 – 1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ q1 = 1450 գ

q2 – նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները, գ/մ² վրկ q2 = 0.002

n – ավտոմեքենաների թիվն է n = 42

Q_{տր.} = (1 x 1 x 0.1 x 6 x 0.05 x 1450 x 0.2 x 0.01)/3600 + 1.3 x 1.0 x 0.2 x 0.002 x 12 x 42 = 0.26 գ/վրկ

Q_{տր.} = (0.26 x 6000 x 3600)/10⁶ = 5.616 տ/շին. ժամանակահատված

գ) Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները

Մթնոլորտային օդը աղտոտվում է ժանր տեխնիկայի աշխատանքի ընթացքում՝ դիզելային վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումներով, որոնք հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա: Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները (բացառությամբ ծծմբային անհիդրիդի) բերված են ստորև:

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Աղյուսակ 6.

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NOx	CH	ՑOU	CO	N2O	CO2	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները, կախված ավտոմոբիլային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից, բերված են ստորև աղյուսակ 7-ում:

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները

Աղյուսակ 7.

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		պարկի միջին տարիքը	տեխնիկական վիճակը
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	1.33	1.8
	CH	1.2	2.0
	NOx	1.0	1.0
	CO2	1.0	1.0
	N2O	1.0	1.0

Ածախածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), ազոտի օքսիդների (NOx) գործակիցները վերցված են «Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից» (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի երկօքսիդի (CO2) և ազոտի երկօքսիդի (N2O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Ընդամենը շինարարության ընթացքում շահագործվելու են 42 հատ տեխնիկական միջոց, որոնք օգտագործում են դիզելային վառելիք: Դիզելային վառելիքի միջին օրական ծախսը կկազմի՝ 420 լ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $420 \times 0.835 = 350.7$ կգ/օր: Ծանր տեխնիկայի և բեռնատար մեքենաների աշխատանքը կիրականացվի 24 ամիս՝

Աղյուսակ 8.

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումներ, գ/կգ	Արտանետումներ,	
			տ/շին. ժամ.	գ/վրկ
	CO	87.14	18.334	1.061

Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CH	0.58	0.12	0.007
	NO _x	42.3	8.89	0.515
	N ₂ O	0.122	0.024	0.0014
	ՑՕՄ	8.16	1.71	0.099
	ՊՄ	4.3	0.898	0.052

Ծծմբային անհիդրիդ

(SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի:

Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2 \sum ks_b$, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 0.3507 տ/շին. ժամ

$SO_2 = 2 \times 0.3507 \times 0.002 = 0.0014$ տ/տարի կամ 0.000064 գ/վրկ:

Եռակցման աշխատանքների հետ կապված արտանետումները

Շինարարակն աշխատանքների տարբեր տեղամասերում՝ կրող շինությունների, ամրանների, խողովակաշարի և այլ տեղերում նախատեսված են եռակցման աշխատանքներ: Եռակցման աշխատանքները իրականացվում են ամբողջ շինարարության ընթացքում՝ 1000 ժամ:

Եռակցման համար նախատեսված են AHO տեսակի եռակցման էլեկտրոդներ, որի օգտագործման ժամանակ առաջանում են եռակցման աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումներ:

Միջին հաշվարկով նախատեսված է 500 կգ էլեկտրոդների պահանջարկ:

Եռակցման աերոզոլ՝ $14.4 \text{ գ/կգ} \times 500 \text{ կգ/ շին. ժամ} = 7200 \text{ գ/ շին. ժամ}$ կամ 0.0072 տ/շին. ժամ, 0.002 գր/վրկ

Մանգանի օքսիդներ՝ $1.87 \text{ գ/կգ} \times 500 \text{ կգ/ շին. ժամ} = 935 \text{ գ/ շին. ժամ}$ կամ 0.00093 տ/շին. ժամ, 0.00026 գ/վրկ:

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը շինարարության ժամանակահատվածում

Աղյուսակ 9.

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ (տ/շին. ժամանակահատված)							
	Փոշի	Եռակցման աերոզոլ	Մանգանի օքսիդներ	CO	NOx	Ածխաջրածի ններ (CH)	ՊՄ	SO2
1	2	3	4	5	6	8	9	10
Փորման-բեռնման աշխատանքներ	0.33 (1.26)	-	-	-	-	-	-	-
Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	0.26 (5.616)	-	-	-	-	-	-	-
Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումներ	-	-	-	1.061 (18.334)	0.52 (8.914)	0.106 (1.83)	0.052 (0.898)	0.000064 (0.35)
Եռակցման աշխատանքներ	-	0.002 (0.0072)	0.00026 (0.00093)	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	87.1(605.6)	0.002 (0.0072)	0.00026 (0.00093)	1.061 (18.334)	0.52 (8.914)	0.106 (1.83)	0.052 (0.898)	0.000064 (0.35)

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

Շինարարության ընթացքում հիմնական ազդեցությունը պայմանավորված է վնասակար նյութերի արտանետումներով: Կատարված է մթնոլորտային արտանետումների հետևանքով տնտեսությանը հասցված վնասի հաշվարկ:

Քանի որ նախատեսվող գործունեությունը ենթադրում է գոյություն ունեցող բժշկական կենտրոն վերանորոգում, վերականգնում և բարելավում՝ օտարման գոտուց դուրս աշխատանքներ չեն նախատեսվում: Շինարարական աշխատանքների ընթացքում ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտված դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է համաձայն գործող /4/ մեթոդակարգի:

Սույն մեթոդակարգը մշակված է այն նյութերի ազդեցության գնահատման համար, որոնց սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նորմատիվները գերազանցել են, սակայն հաշվի առնելով, որ նախկին բոլոր մեթոդակարգերը ՀՀ կողմից ներկայացված չեն և չեն գործում, վնասի հաշվարկը կատարված է վերը նշված մեթոդակարգով:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{q} \Phi_{q} \sum_{i} \Psi_{i} \cdot \text{Ք}_i \quad (1),$$

որտեղ՝

U –ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,
Շ_q –ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9 աղյուսակի վարելահոդերի տարածքի համար, որի շարքին դասվում է տարածքը շինարարության իրականացման ընթացքում, ընդունվում 0.25:

Վ_i –ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5, անօրգանական փոշուծ, եռակցման աերոզոլի համար՝ 25, ծծմբի անհիդրիդի համար՝ 16.5, ածխաջրածինների համար՝ 3, պինդ մասնիկների համար՝ 25, մանգանի օքսիդների համար՝ 705:

Ք_i –ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, Փ_q-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Սույն կարգի համաձայն

$$\Phi_{q} = 1000 \text{ դրամ:}$$

Ք_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\text{Ք}_i = q (3 S_{U_i} - 2 U_{\text{թ}} U_i), S_{U_i} > U_{\text{թ}} U_i \quad (2)$$

որտեղ՝

U_թU_i –ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում

ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք մերձգետնայ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, փաստացի արտանետումները ընդունվում են որպես ՍԹԱ:

S_{ui} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Անշարժ աղբյուրների համար

Անորգանական փոշի՝ 1.26 տ/շին. ժամ

$$U_1 = 0.25 \times 1000 \times 25 \times (3 \times 1.26 - 2 \times 1.26) = 7875 \text{ դրամ}$$

Եռակցման աերոզոլ՝ 0.0072 տ/շին. ժամ

$$U_2 = 0.25 \times 1000 \times 25 \times (3 \times 0.0072 - 2 \times 0.0072) = 45 \text{ դրամ}$$

Մանգանի օքսիդներ՝ 0.0093 տ/շին. ժամ

$$U_3 = 0.25 \times 1000 \times 705 \times (3 \times 0.00093 - 2 \times 0.00093) = 16.4 \text{ դրամ}$$

Շարժական աղբյուրների համար

Անորգանական փոշի՝ 5.616 տ/շին. ժամ

$$U_4 = 3 \times 0.25 \times 1000 \times 25 \times (3 \times 5.616 - 2 \times 5.616) = 105300 \text{ դրամ}$$

Ազոտի օքսիդներ՝ 8.914 տ/շին. ժամ

$$U_7 = 3 \times 0.25 \times 1000 \times 12.5 \times (3 \times 8.914 - 2 \times 8.914) = 83568 \text{ դրամ}$$

Ածխածնի օքսիդ՝ 18.334տ/շին. ժամ

$$U_8 = 3 \times 0.25 \times 1000 \times 1 \times (3 \times 18.334 - 2 \times 18.334) = 13750 \text{ դրամ}$$

Ածխաջրածիններ՝ 1.83 տ/շին. ժամ

$$U_9 = 3 \times 0.25 \times 1000 \times 3 \times (3 \times 1.83 - 2 \times 1.83) = 4117 \text{ դրամ}$$

Պինդ մասնիկներ՝ 0.898 տ/շին. ժամ

$$U_{10} = 3 \times 0.25 \times 1000 \times 25 \times (3 \times 0.898 - 2 \times 0.898) = 16837 \text{ դրամ}$$

Ծծմբային անհիդրիդ՝ 0.35 տ/շին. ժամ

$$U_{11} = 3 \times 0.25 \times 1000 \times 16.5 \times (3 \times 0.35 - 2 \times 0.35) = 4331 \text{ դրամ}$$

$$U = 7875 + 45 + 16.4 + 105300 + 83568 + 13750 + 4117 + 16837 + 4331 = 235839.4 \text{ դրամ/շին. ժամ:}$$

Ներկայացված գումարը արտահայտում է վնասակար նյութերի հետևանքով տնտեսությանը հասցված հարաբերական (բերված) վնասի դրամային արտահայտությունը:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ


4.1 Տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Միսիան բազմաբնակավայրային համայնքում: Տարածաշրջանի բացարձակ բարձրությունները տատանվում են 1500-1700 մ (միջինը՝ 1580 մ), այն մտնում է Ջանգեզուրի ֆիզիկա-աշխարհագրական շրջանի ծալքաբեկորային լեռնաշղթաների ենթաշրջանի մեջ և բնութագրվում է տիպիկ լեռնային, խոր գետահովիտներով, կտրտված ռելիեֆով: Այստեղ գերակշռող է հանդիսանում ռելիեֆի ծալքավոր կառուցվածքային տիպը: Այն արդյունք է ալպիական լեռնակազմության ժամանակաշրջանում ծալքավոր կառուցվածքների, որոնք նորագույն տեկտոնական շարժումների ընթացքում ենթարկվել են տրոհման՝ տարբերակված շարժումների ազդեցության արդյունքում և բարդացել են հետագա արտածին պրոցեսների ներգործությամբ:

Տարածաշրջանը լեռնային է: Հարավից սահմանափակված է Բարգուշատի, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Ջանգեզուրի լեռնաշղթայով (տես Նկար 6-ը), որն ունի միջօրեականի ուղղվածություն: Մորֆոլոգիական տեսակետից շրջանը բաժանված է բարձրադիր լեռնային և լեռնահարթավայրային տարածքների: Ջանգեզուրի լեռնաշղթան (ամենաբարձրը հանրապետությունում)՝ 140 կմ երկարությամբ ձգվում է Ամուլսարից մինչև Մեղրու կիրճը: Դրանից ճյուղավորվում և դեպի արևելք են տարածվում Բարգուշատի և Մեղրու լեռնաբազուկները:

Տարածաշրջանը գտնվում է Ջանգեզուրյան լեռնագոգհովտային լանդշաֆտային շրջանի՝ հյուսիս-Ջանգեզուրյան լեռնագոգհովտային ենթաշրջանի լեռնատափաստանային գոտու՝ Միսիանի գոգհովտի տեղամասում: Միսիսանի գոգհովիտը առաջացել է նախկին լճավազանի տեղում, հեշտ լվացվող դիատոմիտային կավերի տարածման շրջանում: Գոգհովտի Որոտանի ողողահունը բավականին լայն է, մոտ 1.5 կմ: Անմիջապես ողողահունին կից տեղ-տեղ բարձրանում են ոչ մեծ բարձրությամբ այլուվիալ-պրոլյուվիալ դարավանդներ, որոնք լավ արտահայտված են տարածաշրջանում՝ Որոտան գետի երկու լանջերին: Դարավանդներն ունեն 5-7, 20-23, 40-80 և 120 մ բարձրություն: Միսիսանի գոգհովտի լանջերում գլխավորապես տարածված են բաց շագանակագույն հողերը, իսկ ողողահունում՝ այլուվիալ բերվածքային հողերը՝ փարթամ մարգագետնային բուսականությամբ: Բաց շագանակագույն հողերի վրա տարածված են շյուղախոտային փետրախոտաշյուղային տափաստանները:

Նկ. 6. Նախատեսվող գործունեության տեղակայման վայրը լեռնային հատվածում



Պայմանական նշաններ

- 29 - Չանգեզուրի լեռնաշղթա (140 կմ), ամենաբարձր կետը՝ Կապուտջուղ (3904 մ)
- 30 - Բարգուշատի լեռնաշղթա (60 կմ), ամենաբարձր կետը՝ Արամազդ (3392 մ)
- - նախատեսվող գործունեության վայրը
- - լեռնաշղթայի ամենաբարձր կետը

4.2 Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը

Երկրաբանական տեսակետից տարածաշրջանը հիմնականում ներկայացված է դիատոմիտային կավերով, լճային ավազներով, բազալտներով, տրավերտիններով, խճային ալյուվիալ նստվածքներով: Ժամանակակից ալյուվիալ նստվածքները տեղադրված են Որոտանի ողողահունում, գետի ափամերձ հատվածում (1.5 մ հզորությամբ խիճ, գլաքար և ավազ):

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը տեղակայված է խմելու ջրերի արտեզյան ավազանի վրա: Ավազանի հանքայնացում և բարձր ջերմաստիճան ունեցող հանքային ջրերը, ունեն բուժիչ հատկություններ: Տարածաշրջանում կան նաև հզոր աղբյուրներ (Շաքի, Սևաղբյուր, Բլբլթան), ընդ որում, Սևաղբյուրի և Բլբլթանի աղբյուրները տարածաշրջանում օգտագործվում են ջրամատակարար-ման նպատակով:

Տարածաշրջանի կենտրոնական մասով՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան ուղղություններով, հոսում է Որոտան գետը, որը սկիզբ է առնում Չանգեզուրի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան և Ղարաբաղի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լանջերից և թափվում է Արաքս գետի ձախափնյա Ակերա վտակը: Գրունտային ջրերը գետի աջափնյա մասում տեղադրված են 5 մ-ից խորը, իսկ որոշ հատվածների ճահճացումները պայմանավորված են ոռոգման համակարգերից ջրերի արտահոսքով: Գետի ձախափնյա հատվածում գրունտային ջրերի ավելի բարձր մակարդակը (2.5 մ՝ հարավ-արևելյան, 1.5 մ՝ հյուսիս-արևմտյան մասերում) պայմանավորված է աղբյուրների ջրերի ներծծումով:

4.3 Մեյամատեկտոնական պայմանները

Տարածաշրջանի սեյսմատեկտոնական պայմանները բարդ են: Տարածքի սեյսմատեկտոնական պայմանների գնահատման ընթացքում խիստ կարևորվում է ակտիվ խզվածքների ազդեցության գոտիների բացահայտումը և գրունտային պայմանների հաշվառումով սեյսմիկ վտանգի ելակետային արժեքների որոշումը: Միսիան քաղաքի շրջակայքում ակտիվ տեկտոնական ճեղքերի առկայության պայմաններում հաշվարկված է գրունտների առավելագույն արագացումները, որոնք տատանվում են 0.2-0.4 սահմաններում (8 - 9 բալ):

4.4 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է լեռնատափաստանային գոտում: Տարածաշրջանը ներկայացված է այլովիալ բերվածքային հողերով՝ փարթամ մարգագետնային բուսականությամբ, որոնք հիմնականում կուլտուրականացված են և օգտագործվում են հացահատիկային կուլտուրաների մշակության, ինչպես նաև խոտհարքների համար: Տարածաշրջանի հողային ծածկույթը ներկայացված է բաց շագանակագույն, ոչ այնքան զարգացած բնահողերով, իսկ Որոտան գետի գետահովտի լանջերը ներկայացված են բաց շագանակագույն հողերով՝ ծածկված չոր տափաստանային, ինչպես նաև կիսաանապատային բուսականությամբ (օշինդր, ճմավոր սիզախոտ): Այդ լանջերը հիմնականում անտառոտնետության հողերն են, որոնց մեծ մասը քարքարոտ են՝ ծածկված ցածր թփուտներով: Անտառապատ տարածքներում աճում են հացենի, թեղի, կաղնի սոճի, ճապկի: Միսիան քաղաքում առանձնատնային կառուցապատման տնամերձ հողամասերը օգտագործվում են որպես այգիներ և բանջարանոցներ:

4.5 Տարածաշրջանի ջրագրական ցանցը


Միսիան քաղաքի տարածքը գտնվում է Միսիանի սարահարթի վրա և գրավում է Որոտան գետի միջին հոսանքի հովտի լայնացած մասը: Գետի ընդհանուր երկարությունը 179 կմ է, ջրհավաք ավազանը՝ 5540 կմ²: Միսիան քաղաքի տարածքում գետը հոսում է մոտ 5 կմ երկարությամբ, որտեղ գետն ընդունում է Դալիգայ, Բոնակոթ, Ույծ և այլ մանր վտակներ: Գետի ողողահունում առկա են ճահճացած տեղամասեր: Ռելիեֆը խիստ կտրտված է քաղաքի հյուսիս-արևմտյան, հարավ-արևմտյան մասերում, թեքությունները գերազանցում են 50%-ը: Թեքությունները գերազանցում են 50%-ը նաև Որոտանի աջ և ձախ վտակների ողողահուններում: Այդ վտակները նաև հեղեղաբեր են:

Որոտան գետը պատկանում է այն լեռնային ջրահոսքերի տեսակին, որոնք ունեն խառը սնուցում, սնուցման հիմնական աղբյուրը՝ դա ձնհալային ջրերն են: Սնուցման համար կարևոր դեր են խաղում գրունտային և անձրևային ջրերը: Գետի ջրային ռեժիմին առանձնահատուկ են հետևյալ փուլերը՝ գարնանային վարարումներ, որոնք գրավում են նաև ամռան որոշ մասը, անձրևային վարարումներ, աշնանային ցածր մակարդակ, ամառ-աշնանային և ձմեռային ցածր մակարդակ: Գետավարարումների բարձրագույն կետը, որը գրեթե միշտ համարվում է տարվա առավելագույնը, դիտվում է մայիս-հունիս ամիսներին: Սովորաբար վարարման ընդհանուր ալիքի վրա գումարվում են անձրևային ջրերի

հորդացումները սուր պիկերի տեսքով՝ տալով նրան բարձրակատար տեսք: Ամեն տարի Ռրոտան գետը վերին հոսանքներում սառցապատվում է կայուն սառցաշերտով՝ 15-20 օր տևողությամբ, ձմռանը սառցաշերտի հաստությունը հասնում է 5-10 սմ:

Ռրոտան գետի ջրային ռեժիմը ի տարբերություն մյուս գետերի, բնութագրվում է սահուն, երկարատև վարարումներով (ապրիլ-հուլիս), որը պայմանավորված է ձյան և սառույցի հալոցքի սնմամբ: Վարարման և անկման սահուն ընթացքը պայմանավորված է անձրևներով: Հոսքի համար անձրևային ջրերն ունեն փոքր նշանակություն, հիմնականում հոսքը կազմավորվում է ձյան և սառույցի հալոցքային ջրերից: Ռրոտան գետի ջրի ջերմաստիճանը իր առավելագույն ջերմաստիճանին է հասնում հուլիս-օգոստոս ամիսներին, իսկ նվազագույն ջերմաստիճանը դիտվում է հունվար-փետրվար ամիսներին: Ջրի որակը լավն է՝ մաքուր, թափանցիկ, որը պիտանի է խմելու և տեխնիկական նպատակների համար: Այն կեղտոտվում է միայն գարնանային հորդացումների ժամանակ՝ զգալի քանակությամբ ջրաբերվածքների հետևանքով: Տարածաշրջանի ջրագրական ցանցը ներկայացված է ստորև Նկար 7-ում:

Նկ. 7. Տարածաշրջանի ջրագրական ցանցը



Ռրոտան գետի վրա կառուցված է հիդրոէլեկտրակայանների համալիր՝ երեք ՀԷԿ-երով (Սպանդարյան, Շամբ և Տաթև ՀԷԿ-եր) և չորս ջրամբարներով (Սպանդարյանի, Անգեղակոթի, Տոլրսի, Շամբի): Նախատեսվող գործունեության վայրն ամենամոտ գտնվող ջրամբարը Տոլրսի ջրամբարն է, որը նախատեսվող գործունեության վայրից գտնվում է մոտ 3 կմ հեռավորության վրա:

4.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանը գտնվում է "ցուրտ" կլիմայական գոտում՝ զով ամառով և խիստ ցուրտ ձմեռով: Այստեղ ձմեռը երկարատև է: Կայուն ձյան շերտը պահպանվում է 3-4 ամիս: Ձմռան

եղանակային ռեժիմը բնութագրվում է որպես կայուն և շատ կայուն: Ձմեռային եղանակները առանձնանում են արևոտ և անհողմ օրերի զգալի քանակով: Տարածաշրջանում գերակշռում են "չափավոր սառնամանիքային" և "զգալի սառնամանիքային" եղանակները:

Գարունը զով է, երկարատև (2-3 ամիս) և չափավոր սառը: Սկսվում է զարունը ապրիլի երկրորդ կամ երրորդ տասնօրյակից: Մայիսը ամենաանձրևային ամիսն է: Գարնանը եղանակային ռեժիմը կայուն չէ, ապրիլ ամսին 12 օր դիտվում են "կոնտրաստ" փոփոխականությամբ եղանակային պայմաններ: Գարնանային ուշ ցրտահարությունները վերջանում են մայիսի երկրորդ կամ երրորդ տասնօրյակում: Ամառը չափավոր տաք է, տևում է 2-3 ամիս, գերակշռում են պարզ եղանակները: Տարածաշրջանում որոշակի տարիներին լինում է չորային եղանակ: Գերակշռում է "արևոտ, չափավոր խոնավ" եղանակային տիպը՝ 16 օր ամսվա ընթացքում: Իսպառ բացակայում է "շատ շոգ և շատ չոր" եղանակային տիպը: Աշունը զով է: Առաջին աշնանային ցրտահարությունները լինում են հոկտեմբերի առաջին և երկրորդ տասնօրյակներում, երբեմն սեպտեմբերի առաջին տասնօրյակում: Անսառնամանիք օրերի թիվը կազմում է 120-180 օր:

Կլիման ընդհանրապես պայմանավորված է ծովի մակերևույթի նկատմամբ տեղանքի ունեցած բարձրությամբ, հարևան բարձր լեռնագագաթների ազդեցությամբ, տեղանքի թեքությամբ ու էքսպոզիցիայով և այլ բնական գործոններով:

4.6.1 Ջերմաստիճանը

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 7.1°C է, հունվարին՝ -4.5°C, ապրիլին՝ 6.8°C, հուլիսին՝ 18°C, հոկտեմբերին՝ 8.6°C: Բացարձակ նվազագույնը -34°C է, բացարձակ առավելագույնը՝ 36°C:

Աղյուսակ 4. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկանը, °C	Բացարձակ նվազագույնը, °C	Բացարձակ առավելագույնը, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Սիսիան	1580	-4.5	-3	0.9	6.8	11.4	15	18	17.8	14	8.6	2.7	-2.2	7.1	-34	36

4.6.2 Խոնավությունը

Տարածաշրջանում օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 70% է: Միջին խոնավության ցուցանիշները տատանվում են 65-73% միջակայքում: Ամենացուրտ ամսվա միջին հարաբերական խոնավությունը կազմում է 59%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 45%:

Աղյուսակ 5. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Սիսիան	71	71	71	70	71	69	65	65	70	71	73	72	70	59	45

4.6.3 Մթնոլորտային տեղումները

Տարածաշրջանում տեղումների տարեկան միջին քանակը 414 մմ է: Առավելագույն տեղումներ դիտվում են մայիսին՝ 73 մմ, իսկ նվազագույնը օգոստոսին՝ 16 մմ: Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը կազմում է 67 օր: Չյան ծածկույթի ամենաբարձր միջին տասնօրյակային շերտի բարձրությունը 36 սմ է:

Աղյուսակ 6. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը					միջին ամսական օրական առավելագույն, մմ								Ձնածածկույթ		
	ըստ ամիսների					Սարքեր	Առավել տարածված քայլային բարձրությունը, սմ		Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ						
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս		Հունիս	Հուլիս			Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Սիսիան	18	22	36	57	73	57	27	16	23	37	30	18	414	36	67	90
	26	20	22	37	38	47	54	39	29	35	32	22	54			


4.6.4 Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված են Նկար 8-ում:


Քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հուլիս ամսին հյուսիսարևելյան ուղղությամբ և կազմում է 4.4 մ/վ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը գրանցվել է հուլիս ամսին և կազմում է 3.1 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 2.2 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (≥ 15 մ/վ) 2-ն է:

Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են Նկար 9-ում: Ինչպես երևում է Նկար 9-ից դիտարկվող տարածքում գերակշռում են արևելյան ուղղությամբ քամիները: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին արևելյան ուղղությամբ և կազմում է 79%:

Նկ. 8. Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Նկ. 9. Քամու ուղղությունների կրկնելիությունը



4.7 Մթնոլորտային օդը

Միսիան համայնքում մթնոլորտային արտանետումների հիմնական աղբյուրը ավտոտրանսպորտն է, որոնցից հիմնականում արտանետվում են ածխածնի մոնօքսիդ (CO), ազոտի օքսիդներ (NOx), ածխաջրածիններ (CmHn) և փոշի: Քաղաքում գործող արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կարի և տրիկոտաժի ֆաբրիկաներ են, որոնք արտանետումները չնչին է և գործնականում

Ավտոմոբիլային տրանսպորտի արտանետումները տարեկան կտրվածքով հաշվարկված են Միսիան քաղաքի համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում և կազմում են՝

Աղյուսակ 7. Ավտոտրանսպորտի արտանետումների տարեկան քանակները

№	Վնասակար նյութը	Տարեկան քանակը, տոննա
1	Ածխածնի մոնօքսիդ	126
2	Ազոտի օքսիդներ	5.1
3	Ածխաջրածիններ	12.8
4	Փոշի	0.14

4.8 Բուսական և կենդանական աշխարհը

Վերակառուցվող բժշկական կենտրոնի շրջակայքի կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներին բացահայտելու, դրանց վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը գնահատելու և պատշաճ մեղմացնող միջոցառումներ ձեռնարկելու նպատակով կատարվել է կենսաբազմազանության ուսումնասիրություն՝ հիմնվելով գրականության վերլուծության և կարճաժամկետ դաշտային հետազոտության արդյունքների վրա:

4.8.1 Բուսական աշխարհը

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում գերակշռում են լեռնատափաստանային ենթաալպյան և ալպյան բուսականությունը: Տափաստանային բուսականության զարգացումը տարվա ընթացքում ունի արտահայտված ֆազայնություն: Գարնան ֆազայում բուռն և առատ ձևով զարգանում են վաղանցիկ բուսականության տեսակները: Այդ ընթացքում բազմամյա բույսերի վեգետացիան դեռ նոր է սկսվում: Ամռան սկզբին տափաստանները ծածկվում են լոբազգիների և տարախոտների տեսակների խայտաբղետ ծաղիկներով: Սակայն, ամռան վերջում և աշնան սկզբում տափաստանային բուսականության մեծ մասը կազմում են ճիւղ առատ հատիկաբույսերը: Ուշ աշնան ֆազայում տափաստանային հատվածներում հանդիպում են ծաղկած հացազգիների եզակի ներկայացուցիչներ: Գերիշխողը այստեղ խոտաբույսերն են՝ տեղ-տեղ գազային տարրերով հացազգի բուսականությունը փոփոխվում է կախված տափաստանի տեսակից: Դիտարկված սիզախոտային, կծմախոտային շյուղախոտային տափաստանային անցումները: Ոչ մեծ տարածքներում հանդիպում է կծմախոտային և այլ տափաստանային տեղամասեր: Այս տիպի տափաստանային գոտիներին բնորոշ է կծմախոտ (*Andropogon Jschaemum*)

խոտաբույսը, որը ծաղկում է ամառվա կեսին կամ վերջին և այդ շրջանում ամբողջ տարածքը ծածկվում է մանուշակագույն երանգով: Աշնան սկզբին կծմախոտի արդեն չորացած ցողունները տարածքին տալիս են ծղոտադեղնագույն երանգ: Առավել խոնավ տարիներին շատ լավ է զարգանում տարածքին ամենաբնորոշ բուսատեսակը՝ անդրոպոգոնը (*Andropogon*): Տարածքի հիմնա-կան բուսատեսակներն են՝ ագրիստոուկը (*Agropyrum trichophorum*), դաշտավլուկը (*Poa bulbosa* L), ճիլը:

Նախատեսվող գործունեության տարածքի շրջակա հողատարածքները հիմնականում արոտավայրեր են: Կան նաև վարելահողեր: Ընդհանուր առմամբ, տարածքը գտնվում է մարդածին ազդեցության ներքո: Տարածքում ուսումնասիրվել են անոթավոր բույսերի ֆլորան, բուսականությունը, հազվագյուտ և անհետացող տեսակների առկայությունը: Բուսական տեսակների որոշման և դրանց վերաբերյալ լրացուցիչ տվյալների աղբյուր են հանդիսացել Հայաստանի ֆլորայի 11 հատորները (*Флора Армении*, 1954-2009) և ՀՀ Բույսերի Կարմիր գիրքը (2010): Բույսերի գիտական անվանումները ճշտվել են ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (*Черепанов*, 1995):





Հայտնաբերվել են հիմնականում Սոխազգիների (*Alliaceae*), Լոբազգիների (*Fabaceae*), Հովանոցազգիների (*Apiaceae*), Կորաքազգիների (*Capparaceae*), Բարդաձաղկավորների (*Asteraceae*), Հացազգիների (*Poaceae*), Գաղտրիկազգիների (*Boraginaceae*), Հիրիկազգիների (*Iridaceae*) և Հակինթազգիների (*Hyacinthaceae*) ընտանիքների տեսակներ: Դրանք են՝

- Իշառվույտ դեղատու (*Melilotus officinalis* (L.) Pall.)
- Առվույտ ցանովի (*Medicago sativa* L.)
- Երեքնուկ վարելահողային (*Trifolium arvense* L.)
- Սիբեխ սովորական (*Falcaria vulgaris* Bernh.)
- Երնջնակ (*Eryngium campestre*)
- Կորաք՝ կապար փշոտով (*Capparis spinosa*)
- Օշինդր սովորական (*Artemisia vulgaris* L.)
- Օշինդր դառը (*Artemisia absinthium* L.)
- Խատուտիկ (*Taraxacum officinale*)
- Հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium* L.)
- Ջղախոտ (*Plantago major*)
- Հալևորուկ ողկույզաձև (*Senecio racemosus* (Bieb.) DC.)
- Փետրախոտ նեղատերև (*Stipa tirsia* Steven)
- Անմոռուկ նոսրածաղիկ (*Myosotis sparsiflora* Pohl)
- Գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx* Bunge)
- Թթվիճ արևելյան (*Betonica orientalis* L.)
- Շնդեղ Շովիցի (*Colchicum szovitsii*)
- Սպիտակ բանջար, Աստղաշուշան հայաստանի (*Ornithogalum hajastanum* Agapova)
- Պապլոր նրբածաղիկ (*Muscari tenuiflorum* Tausch)
- Սագասոխուկ Խանայի (*Gagea chanae* Grossh.)
- Քրքում Ադամի (*Crocus adamii* J. Gay)
- Քրքում հրաշալի (*Crocus speciosus* M. Bieb.)
- Հիրիկ տարօրինակ (*Iris paradoxa* Steven)

- Հիրիկ կովկասյան (*Iris caucasica Hoffm.*)
- Սոխ գորշ մանուշակագույն (*Allium fuscoviolaceum Fomin*)
- Իքսիոլիրիոն թաթարական (*Ixiolirion tataricum (Pall.) Herb.*)

Տարածքում հանդիպող որոշ բուսատեսակներ պատկերված են ստորև **Նկար 10**-ում:

Նկ. 10. Տարածքում հանդիպող որոշ բուսատեսակների լուսանկարները

	
<p><i>Միբեխ սովորական (Falcaria vulgaris Bernh.)</i></p>	<p><i>Taraxacum officinale - Խատուտիկ</i></p>
	
<p><i>Հիրիկ կովկասյան (Iris caucasica Hoffm.)</i></p>	<p><i>Ջղախոտ (Plantago major)</i></p>

Նախատեսվող գործունեության տարածքում ծառաթփային բուսականություն չի հայտնաբերվել:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում ընդգրկված բուսատեսակների ցանկը բերված է ստորև Աղյուսակ 9-ում, իսկ դրանց լուսանկարները ներկայացված են Նկար 11-ում:

Աղյուսակ 9. Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Centaurea leuzeoides</i>	Տերեփուկ լեզեանման	CR
2	<i>Isatis karjaginii Schischk</i>	Լրջուն Կարյագինի	CR
3	<i>Astragalus humilis M. Bieb</i>	Գազ ցածր	CR
4	<i>Iris lineolata (Trautv.) Grossh</i>	Հիրիկ նեղգծային	EN

5	Sclerochloa woronowii (Hack.) Tzvelev ex Bor	Կարծրախոտ Վորոնովի	EN
---	--	--------------------	----

Նկ. 11. Տարածաշրջանում հանդիպող չՀ Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակների լուսանկարները



Տերեփուկ լիզեաննան (*Centaurea leuzeoides*)



Գազ ցածր (*Astragalus humilis* M. Bieb)



Լրջուն Կարյազինի (*Isatis karjaginii* Schischk)



Հիրիկ նեղծային (*Iris lineolata* (Trautv.) Grossh)



Կարծրախոտ Վորոնովի (*Sclerochloa woronowii* (Hack.) Tzvelev ex Bor)

4.8.2 Կենդանական աշխարհը

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում կենդանական աշխարհի ներկայացուցիչների կազմը պայմանավորված է տարածքների բնակլիմայական ցուցանիշներով և բուսական ծածկույթի տեսակներով: Կենդանիների բազմազանությունը առավել հարստանում է դրանց արտազոնալ լանդշաֆտների (ցանքեր, այգիներ, ժայռեր,

քարաթափեր, բնակավայրեր և այլն) ներկայացուցիչներով: Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիները հիմնականում բնակվում են քարքարոտ և ժայռային տարածքներում: Քարքարոտ տարածքներում առատորեն բազմանում են մկնանման կրծողները, որոնցից տարածված են փոքր ասիական գետնամուկը, լեռնային կույր մուկը, ճագարամուկը, դաշտամուկը, անտառամուկը, իսկ ժայռերի խոռոչներում բնադրում են չղջիկները: Հաճախակի կարելի է հանդիպել խլուրդների:

Տարածաշրջանը աչքի է ընկնում թռչունների բազմազանությամբ: Թռչուններից առավել բնորոշ են լորը, մոխրագույն կաքավը, սովորական տատրակը, մոխրագույն կռունկը: Թփուտներում բնադրում են ճնճղուկազգիներ, որոնց բնորոշ ներկայացուցիչներն են՝ կանեփակերը, այգու դրախտապանը, դաշտային արտույտը, լեռնային սարյակը, սովորական ծղրիդը: Կան նաև գիշատիչ թռչուններ՝ ճուռակ, մկնաբազե, սև ուրուր, հազվադեպ հանդիպում է նաև տափաստանային արծիվը: Տարածված են նաև ագռավը, կկուն, խաչկտուցը: Միջատակերներից տարածքի համար բնորոշ են սպիտակատամիկը և սպիտակափոր սպիտակատամիկը: Հանդիպում են նաև գիշատիչ կենդանիներ՝ սրննչակ, աղվես, գայլ, գորշուկ, հազվադեպ նաև՝ աքիս և կզաքիս:

Գետափնյա տարածքներում հիմնականում գերակշռում է լեռնատափաստանային գետերին բնորոշ կենդանական աշխարհը, որոնց բնորոշ ներկայացուցիչներն են՝ փոքրիկ հավիկը, կտցարը, սովորական որորը, վայրի բաղը, ծովարծիվ սպիտակապոչը, սովորական ծղրիդը: Գետափնյա ջրային տարածքներում հանդիպում են նաև սովորական և ջրային լորտունները, ցածրադիր ջրային գոտիներում երկկենցաղներից տարածված են լճային գորտը, առավել բարձրադիր մասերում՝ կանաչ դոդոշը:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված կենդանատեսակների ցուցակը բերված է Աղյուսակ 10-ում: Կենդանատեսակներից որոշները ներկայացված են Նկար 12-ում:

Աղյուսակ 10. Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Ortholitha kuznetzovi</i> Wardikian	Կուզնեցովի երկրաչափ թիթեռ	EN
2	<i>Pelobates syriacus</i> Boettger	Միրիական սխտորագորտ	VU
3	<i>Gypaetus barbatus</i> Linnaeus	Գառնանգղ (Մորուքավոր անգղ)	VU
4	<i>Neophron percnopterus</i> Linnaeus	Գիշանգղ	EN
5	<i>Gyps fulvus</i>	Սպիտակազլուխ անգղ	VU
6	<i>Circaetus gallicus</i>	Օձակեր արծիվ	VU
7	<i>Aquila pomarina</i>	Փոքր ենթարծիվ	VU
8	<i>Aquila nipalensis orientalis</i> Hodgson	Տափաստանային արծիվ	VU
9	<i>Aquila chrysaetos</i>	Քարարծիվ	VU
10	<i>Hieraetus pennatus</i>	Գաճաճ արծիվ	VU
11	<i>Falco peregrinus</i> Tunstall	Սապսան	VU
12	<i>Proserpinus proserpina</i>	Պրոզերպինա իլիկաթիթեռ	VU

Նախատեսվող գործունեության տարածքը նախկինում օգտագործվել է արտադրական նպատակներով և փաստորեն երկար տարիների ընթացքում ենթարկվել է մարդածին

ազդեցությանը: Այդ իսկ պատճառով, ասբեստի թափոնների տեղադրման համար նախատեսված հողատարածքը աչքի չի ընկնում հարուստ կենդանական աշխարհով: Սակայն, հողատարածքում առկա երկաթբետոնե կոնստրուկցիաների (տես Բաժին 7.1-ը) մնացորդների վրա կարող են հանդիպել սողուններ, հատկապես մողեսներ և օձերի տեսակներ՝ դեղնափորիկը, պղնձօձը, տափաստանային իժը, նաև հայկական իժը: ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ կամ դրանց բնակության հետքեր նախատեսվող գործունեության հողատարածքում չեն հանդիպել: Ամեն դեպքում, շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ հողատարածքում առկա կենդանական աշխարհի ներկայացուցիչները կհասցնեն վերաբնակվել հարևան տարածքներ և չեն ենթարկվի ազդեցության նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում:

Նկար 12. Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակներից որոշների լուսանկարները



Կուզնեցովի երկրաչափ թիթեռ (*Ortholitha kuznetzovi* Wardikian)



Միրիսական ախտորազորս (*Pelobates syriacus* Boettger)



Տափաստանային արծիվ (*Aquila nipalensis orientalis* Hodgson)



Մապսան (*Falco peregrinus* Tunstall)



Օձակեր արծիվ (Circaetus gallicus)



Գիշանգղ (Neophron percnopterus Linnaeus)



Գաճաճ արծիվ (Hieraetus pennatus)



Մախտակազուխ անգղ (Gyps fulvus)

4.9 Հատուկ պահպանվող տարածքները և պատմամշակութային հուշարձանները


Նախատեսվող գործունեության տարածաշրջանը չի հանդիսանում ոչ բնության հատուկ պահպանվող, ոչ էլ անտառային տարածք: Մոտակա հատուկ պահպանվող տարածքներն են "Սև լիճ", "Գորիսի" և "Զանգեզուր" արգելավայրերը, որոնք գտնվում են նախատեսվող գործունեության վայրից համապատասխանաբար 19 կմ, 29 կմ և 26 կմ հեռավորությունների վրա (տես Նկար 14-ը):

Միսիանի համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Համաձայն ՀՀ Կառավարության 29.12.2005թ.-ի "ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 2322-Ն որոշման հավելվածի, Միսիան քաղաքի վարչական սահմաններում կան 34 պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ: Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը գտնվում է Սուրբ Հովհաննես եկեղեցին (Միսավանի սուրբ Հովհաննես եկեղեցի, սյունի վանք)՝ շրջակա գերեզմանոցով: Եկեղեցու տարածքում տեղադրված են նաև Արցախյան պատերազմում զոհված ազամարտիկներին և Մեծ Եղեռնի զոհերին նվիրված հուշարձանները (տես Նկար 13-ը): Սուրբ Հովհաննես եկեղեցին գտնվում է նախատեսվող գործունեության տարածքից մոտ 850 մ հեռավորության վրա:

Նկ. 13. Սուրբ Հովհաննես եկեղեցին և դրա տարածքում տեղադրված հուշարձանները



Նկ. 14. Նախատեսվող գործունեության հեռավորությունը հատուկ պահպանվող տարածքներից



Աղբյուրը՝ ՀՀ հատուկ պահպանվող տարածքների և անտառների քարտեզը

Բնության հուշարձանների ցանկ՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի N967-Ն որոշման

«Անանուն» ապարների մերկացումներ	Սյունիքի մարզ, Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում
«Հերթ» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ
«Վարդանաձորի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-ախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքի հս-արլ եզրին

4.10 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ տնտեսական վիճակը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Հանրապետության հարավ-արևելյան մասում, Սյունիքի մարզի Միսիան բազմաբնակավայրային համայնքի վարչական սահմաններում: Միսիան բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է "Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" ՀՀ 09.06.2017 թ.-ի ՀՕ-93-Ն օրենքի համաձայն՝ Միսիանի տարածաշրջանի համայնքների միավորման արդյունքում: Ընդգրկում է 32 բնակավայր (2 քաղաք, 30 գյուղ), որից մեկը համայնքի կենտրոն Միսիան քաղաքն է:

Համայնքի տարածքը կազմում է 3320 հա: Այն գտնվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանից 217 կմ հեռավորության վրա, Սյունիքի մարզի վարչական կենտրոն Կապանից՝ 110 կմ հեռավորության վրա, Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց՝ 6 կմ դեպի հարավ, ծովի մակարդակից՝ 1600 մ բարձրության վրա, քաղաքի միջով հոսում է Որոտան գետը:

Քաղաքի հյուսիսով՝ մոտ 5 կմ հեռավորությամբ, անցնում է Մ-2 միջպետական նշանակության Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի մայրուղային ճանապարհը: Միսիանն այդ ճանապարհին է կապված Հ-44 Շաքե-Միսիան-Դաստակերտ ճանապարհով: Մյուս ավելի կարճ ճանապարհով քաղաքը կապվում է Մ-2-ի հետ, որն ավելի հարմարավետ է դեպի հարավ գնալու դեպքում (Գորիս, Կապան): Միսիան քաղաքից սկիզբ են առնում դեպի շրջակա գյուղերը տանող ևս 3 տեղական նշանակության ճանապարհներ՝ Միսիան-Բոնակոթ, Միսիան-Աշոտավան-Սավվարդ, Միսիան-Շամբ-Լեռնաշեն:

4.11 Հողօգտագործում

Համայնքում հողերի սեփականաշնորհումը կատարվել է 1991թ.-ին, որի ընթացքում սեփականաշնորհումից օգտվել են 780 ընտանիքներ: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերը կազմում են 3320 հա, որից՝

- Բնակավայրերի հողեր՝ 701.97 հա,
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1785.99 հա,
- Անտառային հողեր՝ 598.03 հա,
- Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 49.77 հա,
- Էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 17.68 հա,
- Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 97.96 հա,
- Հատուկ նշանակության՝ 32.66 հա,
- Ջրային հողեր՝ 35.9 հա:

4.12 Գյուղատնտեսություն

Միսիանի տարածաշրջանը Հանրապետությունում հայտնի է եղել հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի և անասնապահական մթերքների արտադրությամբ, որը գերակշիռ դեր ուներ հանրապետությունում: Բնակչության շուրջ 80% զբաղվում է գյուղատնտեսությամբ, բնակչության կողմից մշակվող հողատարածքների չափերը տարբեր են՝ սկսած 100 մ² փոքրիկ հողակտորներից, մինչև 25-30 հա: Հիմնական մշակաբույսերն են ցորեն, գարի, հաճար, կարտոֆիլ, կաղամբ և այլ բանջարաբոստանային կուլտուրաներ: Գյուղատնտեսության զարգացման և հողերի արդյունավետ մշակության գործում լուրջ խոչընդոտ է հողերի մասնատվածությունը, որը ավելի ծախսատար և աշխատատար է դարձնում գյուղատնտեսությունը: Քաղաքում գյուղմթերքների վաճառքի շուկայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում ֆերմերային տնտեսությունների արտադրանքի սպառման վրա:

Միսիանի բազմաբնակավայր համայնքում կան 1785.99 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝

- Վարելահողեր՝ 913.90 հա,
- Բազմամյա տնկարկներ, պտղատու այգիներ՝ 16.58 հա,
- Արոտավայրեր՝ 285.68 հա,
- Այլ նշանակության հողեր՝ 569.87 հա:

4.13 Կրթություն, մշակույթ, սպորտ և առողջապահություն

Համայնքում գործում է 1 ավագ, 4 հիմնական դպրոցներ, 6 արտադպրոցական հաստատություններ, 4 նախակրթարաններ, 1 ԲՈՒՀ և 1 քոլեջ: Համայնքային ենթակայության 4 նախադպրոցական հաստատություններում ընդգրկված են 429 երեխաներ: Նախակրթարանները ապահովված են տիպային շենքերով, ջրով, էլեկտրաէներգիայով, կանոնավոր կատարվում է աղբահանություն: Համայնքում կա Համո Սահյանի անվան քաղաքային մշակույթի տուն, որը հիմնանորոգվել է 2010թ.-ին Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի աջակցությամբ: Մշակույթի տունը և գրադարանը ապահովված են լոկալ ջեռուցմամբ: Գրադարանն ունի 120256 անուն գիրք, 3708 ընթերցող: Համայնքի գրադարանի գրապահոցները անմխիթար վիճակում են, համալրման ենթակա գրքերի կարիք կա: Ներքին հարդարման աշխատանքների, լուսամուտների և դռների նորոգման և փոփոխման կարիք կա: 2017-2021թթ. նախատեսվում է ֆինանսական միջոցներ պլանավորել գրադարանի հիմնական նորոգման համար:

Համայնքում գործում է ֆուտբոլի դպրոց, շախմատի դպրոց: Շախմատի դպրոցում ընդգրկված են 83, իսկ ֆուտբոլի դպրոցում՝ 45 սաներ: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի աջակցությամբ 2017 թվականին կառուցվել է արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտ: Համայնքն ունի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, որտեղ գործում են մի շարք խմբակներ (խոհարար-հրուշակագործի, խոհարար-դիզայների, գեղանկարչության, փայտի գեղարվեստական մշակման, գորելենի, համակարգչային ուսուցման,

վարսահարդարների, մատնահարդարների, դիմահարդարների, հելունագործության, ուլունքագործության, դեկորացիաների ձևավորման, ասմունքի): Համայնքի երաժշտական դպրոցում գործում են դաշնամուրի, լարային, փողային և ժողգործիքների բաժինները: Դպրոց են հաճախում 168 սան: Վերջին տարիներին ավելացել են ժողգործիքների բաժինների սաների թիվը, որը պայմանավորված է նշված բաժինների նկատմամբ պետական հոգացությամբ: Համայնքը ունի պարարվեստի դպրոց, որտեղ սովորում են 82 սան: Դպրոցի շենքը հիմնական նորոգման կարիք ունի, ուսումնական պայմանները բավարար չեն արդյունավետ ուսուցման համար:

Համայնքում կա 1 հիվանդանոց, որը նախատեսված է 50 հիվանդի համար: Համայնքում գործում է 6 ատամնաբուժական կենտրոններ և 5 դեղատուն:

4.14 Առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում գործում են "ՎՏԲ", "Արդշինբանկ" և "Ակբա Կրեդիտ Ագրիկոլ" բանկերի մասնաճյուղեր և 5 ֆինանսավարկային կազմակերպություններ:

Համայնքի տարածքում գործում են նաև առևտրի և սպասարկման 130 փոքր և միջին օբյեկտներ, այդ թվում ծխախոտ և ալկոհոլային խմիչքներ վաճառող՝ 68 օբյեկտներ: Գործում են 5 բենզինի լիցքավորման կետեր, գազի լիցքավորման կետեր՝ 3 (2 հիմնական և 1 շարժական): Համայնքում գործում է 3 հյուրանոց և 1 հյուրատուն:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

5.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,

- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

5.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

5.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

5.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

5.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:

- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

5.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

5.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիչով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

5.3.5 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) բժշկական կենտրոնում արտադրական վտանգավոր օբյեկտների առկայության դեպքում /կաթսայատան/ առակայության «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:

5.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

5.3.7 Թափոնների կառավարում

Բժշկական կենտրոնի վերակառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;

Բժշկական կենտրոնի վերակառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

5.3.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգուման ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառափուրտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5.3.9 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Բժշկական կենտրոնի հարակից տարածքները բավականին ուրբանիզացված են: Բժշկական կենտրոնի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այդուամենայնիվ, շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

- 1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով, առանձնացնել պահպանվող գոտիներ:
- 2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն *ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն)* հիմնադրույթներին համապատասխան:
- 3) Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:
- 4) Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղուկ առաջացնող գործողություն

իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):

5) Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը, լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:

6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
5. Կենսաբազմազանության մոնիթորինգ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,

		<p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համալնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p> <p>Տարածքի բարեկարգում/ կանա չապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>- ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>- Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p>

